ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՎԹՅԱՆ ՍՈՆԱ ԱՐԱՅԻ

ԿԵՆՍԱԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԱՐԺԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՎ

**Թ.00.01–«Փիլիսոփայություն» մասնագիտությամբ
փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդում

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մանուկ Արսենի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օլեգ Արշավիրի Գաբրիելյան,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Լևոն Գառնիկի Բաբաջանյան

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2023 թ. ապրիլի 19-ին ժամը 16:00-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Փիլիսոփայության 062 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375010, ք.Երևան, Տիգրան Մեծի 17:

Սեղմագիրը առաքված է 2023 թ. փետրվարի 23-ին:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

ՀՀ ԲՈԿ-ի փիլիսոփայության 062 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հովհաննես Օնիկի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտվող թեմայի արդիականությունը:

Կենսաբարոյագիտությունը միջառարկայական ուսումնասիրություններ հատուկ բնագավառ է, որը հետազոտում է առողջության, կյանքի և մահվան հիմնախնդիրները, որոնք ծագել են ժամանակակից կենսաբանության, դեղաբանության և բժշկագիտության նվաճումների, ինչպես նաև կենսաբժշկական նորագույն տեխնոլոգիաների կիրառման ոլորտում: Այդ հիմնախնդիրների ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է հետևյալ գործոններով:

Նախ, 20-րդ դարի երկրորդ կեսին ձևավորված բջջային և մոլեկուլյար կենսաբանության, գենետիկայի, իմունաբանության, անեսթեզիոլոգիայի, փոխպատվաստաբանության ու ռեանիմատոլոգիայի և այլ ոլորտներում իրականացված հետազոտությունների արդյունքների բարոյագիտական իմաստավորման, հումանիտար փորձաքննության հրամայական պահանջներով:

Երկրորդ՝ արդի հասարակության մեջ գիտատեխնոլոգիական և բարոյական զարգացման մակարդակների միջև առաջացած խզման, անհամապատասխանության մեղմացման և աստիճանական վերացման խնդիրներով:

Երրորդ, կենսաբարոյագիտության խնդրակարգի արդիականացման կարևորագույն գործոններից մեկը կենսաբանների, բժիշկների և դեղագետների մասնագիտական և իրավական պատասխանատվության բարձրացման հարցերն են: Այդ, ինչպես նաև բժշկության սոցիալական գործառույթների, հասարակական գիտակցության էկոլոգիականտրոն ձևաչափի զարգացման խնդիրների լուծման առումով էական է կենսաբարոյագիտության, որպես պրակտիկ փիլիսոփայության առաքելությունը:

Չորրորդ, կենսաբարոյագիտության, որպես գիտակարգի մեթոդաբանական հիմքերի զարգացումը կարևոր է բնական և հումանիտար գիտությունների ինտեգրման, բնագիտական

գիտելիքների, բժշկության փիլիսոփայության և առողջապահության ողջ համակարգի հումանիզացման գործընթացի տեսանկյունից:

Հինգերորդ, խնդրո առարկայի ուսումասիրության արդիականությունը պայմանավորված է կենսաբանության, բժշկության, դեղագիտության, և հարակից այլ գիտակարգերում կուտակված էմպիրիկ, փորձարարական նյութերի առատությամբ և դրանց փիլիսոփայական ընդհանրացման, իմաստավորման անհրաժեշտությամբ:

Վերջապես, կենսաբարոյագիտության որպես գիտակարգի համակարգային ուսումնասիրությունների կաևորությունը նշանակալի չափով պայմանավորված է տեղեկատվական ցանցերի բուռն զարգացման գործընթացներով, որոնք, օրակարգային են դարձնում առողջապահության համակարգի անվտանգության ապահովման տեղեկատվական խնդիրները:

Հետազոտական թեմայի մշակվածության աստիճանը:

«Բիոէթիկա», կամ, որ նույնն է՝ «կենսաբարոյագիտություն» եզրույթը առաջին անգամ շրջանառության մեջ դրել է ամերիկացի ուռուցքաբան Վան Ռենսելլեր Փոթերը 1969թ.՝ իր «Կենսաբարոյագիտություն. կամուրջ դեպի ապագա» գրքում[1]: Կենսաբարոյագիտությունն ավելի շատ հայտնի է դարձել ըստ այն սահմանման, որը ձևակերպել է ամերիկացի Անդրե Հելլեգերսը: Նա այս նոր գիտակարգը փոխկապակցել է հիվանդի արժանապատվության և իրավունքների պաշտպանության հետ: Ա. Հելլեգերսին հաջողվել է ակադեմիական մակարդակի բարձրացնել կենսաբարոյագիտությունը՝ կա-ռուցակարգել այն գիտության պահանջներին համապատասխան [2]: Կենսաբարոյագիտության

---

[1] ***Potter V. R.,*** Bioethics: bridge to the future. Englewood Cliffs, N. J., “Prentice-Hall”, 1971.

[2] Տե՛ս ***Warren R. T.,*** The Wider View: Andre Hellegers’s Passionate, Integrating Intellect and the Creation of Bioethics, «Kennedy Institute of Ethics Journal», 1999, March., էջ. 25-51:

խնդրակարգին անդրադարձել են ՈՒ. Տ. Ռայխը,[3] Հ. Յոնասը,[4] Դ. Գրացիան[5] և այլք: Է. Սգրեչչան և Վ. Տամբոնեն կարևորել են գիտաճյուղի մարդաբանական տեսանկյունը, կենսաբարոյա-գիտությունը դիտարկելով որպես «մարդկային արժանապատվության մարդաբանություն»: Նրանք հեղինակել են Եվրոպայում կենսաբարոյագիտության առաջին դասագիրքը, որը ռուսերեն հրատարակվել է 2002թ.[6]: Ներկայումս Արևմուտքի առաջատար բարձրագույն բժշկական կրթական հաստատություններում սկսել են հետազոտական և կրթական գործունեություն իրականացնել կենսաբարոյագիտության ամբիոններ: Համաշխարհային բժշկական ասոցիացիայի հռչակագրում[7] (Թել Ավիվ, 1999թ.) հատուկ նշված է այդպիսի ամբիոններ ստեղծելու անհրաժեշտության մասին: Ցավոք, այդ կարևոր պահանջը դեռևս լիարժեք իրականություն չի դարձել Հայաստանում:

Ինչ վերաբերում է հետխորհրդային տարածքին, ապա այստեղ կարելի է հատկապես առանձնացնել Բ. Գ. Յուդինի աշխատությունները[8], որոնցում հեղինակը զարգացրել է այն

---

[3] Տե՛ս ***Warren R. T.,*** Encyclopedia of Bioethics, Volume 1, “Macmillan Publishing Company, Incorporated”, 1995, January, p.VII-VIII. http://course.sdu.edu.cn/G2S/eWebEditor/uploadfile/20120826202224001.pdf (վերջին դիտումը՝ 18.02.2023):

[4] ***Йонас Г.,*** Принцип ответственности. Опыт этики для технологической цивилизации. Пер. с нем., предисловие, примечания Маханькова И. И., М., “Айрис-пресс”, 2004.

[5] ***Gracia D.,*** Fundamentos De Bioetica, Madrid: Eudema, 1989.

[6] ***Сгречча Э., Тамбоне В.,*** Биоэтика. серия Богословие и наука. М., 2002. https://predanie.ru/book/216497-bioetika/ (վերջին դիտումը՝ 18.02.2023):

[7] WMA Resolution on the Inclusion of Medical Ethics and Human Rights in the Curriculum of Medical Schools World-Wide, 51st World Medical Association General Assembly, Tel Aviv, Israel, October 1999. https://www.wma.net/policies-post/wma-resolution-on-the-inclusion-of-medical-ethics-and-human-rights-in-the-curriculum-of-medical-schools-world-wide/ (վերջին դիտումը՝ 18.02.2023):

[8] ***Юдин Б. Г.,*** Социальная институционализация биоэтики. Биоэтика:проблемы и перспективы. М., “ИФ РАН”, 1992. ; ***Юдин Б. Г.,*** Основные этические принципы европейской биоэтики и биоправа. “Вопросы философии”, 2003, № 5, с. 80-83.

տեսակետն, ըստ որի կենսաբարոյագիտությունը գիտական իմացության միջառարկայական ոլորտ է, որը հետազոտում է բարոյական և սոցիալական հիմնախնդիրները, որոնք կյանքի են կոչվել կենսաբժշկական նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ:

Կենսաբարոյագիտության փիլիսոփայական հիմքերը վերլուծվել են Ի. Ն. Սմիռնովի, Վ. Գ. Բորզենկովի, Ա. Դ. Ուրսուլի, Տ. Վ. Միշատկինայի և ուրիշների աշխատություններում [9]:

Հայաստանում կենսաբարոյագիտական ուսումնասիրություն-ների փիլիսոփայական հիմքերին առաջին անգամ անդրադարձել է փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ս. Հ. Դավթյանը: Նրա «Բիոէթիկա» արժեքավոր աշխատանքը ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատվել է որպես դասագիրք բժշկական բուհերի ուսանողների համար: Նրա գրչին են պատկանում նաև «Բիոէթիկա» (2009)[10] և «Bioetics» (2013) [11] ուսումնական ձեռնարկները, ինչպես նաև «Բիոէթիկայի ներածություն» (2012)[12] մենագրությունը: Կենսաբարոյագիտության խնդրաշարն իր վրա է սևեռել նաև հայ կենսաբանների[13] և աստվածաբանների[14] ուշադրությունը:

Չնայած կենսաբարոյագիտության նկատմամբ աճող հետաքրքրությանը և այդ ասպարեզում հետազոտողների որոշակի

---

[9] ***Смирнов И. Н.,*** Философские измерения биоэтики. “Вопросы философии”, 1987, №12, с. 83-97; ***Борзенков В. Г.,*** От философии жизни к биофилософи? В кн. “Биофилософия”. “РАН Институт философии”, М., 1997, с. 27-41; ***Урсул А. Д.,*** Проблема информации в современной науке. Философские очерки. М., “Наука”, 1975; ***Мишаткина Т. В.,*** Три круга этики. “Человек”, 2006, №5, с. 89-98; **Мишаткина Т. В.,** Этика, Экспресс-курс, 4-е изд., стер., Минск, “Новое знание”, 2008.

[10] ***Դավթյան Ս. Հ.,*** Բիոէթիկա: Դասագիրք, Երևան, 2009, 208 էջ:

[11] ***Davtyan S. H.***, Bioethics. Handout. Yerevan, “Yerevan State Medical University”, 2013, 189 p.

[12] ***Դավթյան Ս. Հ.,*** Բիոէթիկայի ներածություն: Մենագրություն, հեղ. հրատ., Երևան, 2012, 329 էջ:

[13] ***Ներսեսովա Լ. Ս., Խաչատրյան Զ. Ա., Մկրտչյան Ս. Ա.,*** Կենսաէթիկայի ներածություն: Երևան, «Գիտություն», 2012, 444 էջ:

[14] ***Հրաչ սրկ. Սարկիսյան, Վարդան սրկ. Ասլանյան,*** Կենսաէթիկայի հիմնահարցեր: Ուսումնաօժանդակ ձեռնարկ, Սբ. Էջմիածին, 2015, 224 էջ:

ձեռքբերումներին, այդուամենայնիվ կենսաբարոյագիտության խնդրակարգը դեռևս չի դարձել սոցիալ-փիլիսոփայական համակողմանի ուսումնասիրության առարկա: Հավուր պատշաճի պարզաբանված չեն այդ խնդրակարգի արժեբանական ու մեթոդաբանական տեսանկյունները: Ատենախոսության առջև խնդիր է դրված հնարավորինս լրացնել այդ բացը, ցույց տալ, որ կենսաբարոյագիտությունը ոչ միայն կյանքի և առողջության նոր էթիկա է, այլև կյանքի և առողջության նոր արժեբանություն, ավելին՝ պրակտիկ փիլիսոփայության նոր ձև:

Հետազոտության օբյեկտը՝ կենսաբարոյագիտության միջ-առարկայական խնդրակարգն է:

Հետազոտության առարկան՝ գիտաճյուղի ձևավորման նա-խադրյալներն են՝ հասկացութային ապարատի ու մեթոդների առանձնահատկությունները, գործառույթները, այլ գիտաճյուղերի հետ կապերը, զարգացման միտումներն ու հեռանկարները:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախո-սության նպատակն է՝ ուսումնասիրել կենսաբարոյագիտության՝ որպես միջգիտակարգային գիտելիքի նոր ոլորտի ձևավորման հիմքերն ու նախադրյալները, վերհանել հասկացութային ապարատի և դրա ձևավորման առանձնահատկությունները, ուրվագծել տվյալ գիտաճյուղի զարգացման հեռանկարներն ու միտումները:

Հետազոտության առջև դրված ***խնդիրները*** բաժանվել են երկու խմբի:

Առաջին խումբը կազմում են՝

- ✓ կենսաբարոյագիտական գիտելիքի աշխարհայացքային, արժեբանական և մեթոդաբանական հիմքերի վերհանումը,
- ✓ կենսաբժշկական նորագույն տեխնոլոգիաների ներդրման սոցիալական հետևանքների իմաստավորման գործում կեն-սաբարոյագիտության դերի վերլուծությունը, դրա հիման վրա նոր կենսատեխնոլոգիաների հումանիտար փոր-ձաքննության, ստանդարտների ստեղծման ու կիրառման սկզբունքների հետազոտումը,

- ✓ կենսաբարոյագիտության վերաբերյալ ազատական և պահպանողական մոտեցումների հետազոտումն ու համադրական վերլուծությունը, դրանց դիալեկտիկայի բացահայտումը:

Խնդիրների **երկրորդ խումբը** վերաբերում է մարդու առողջության, կյանքի և մահվան, էվթանազիայի, հոսպիսյան շարժման հիմնահարցերի փիլիսոփայական ուսումնասիրության գործում կենսաբարոյագիտության գործառույթների վերհանմանը:

Խնդիրների այս խմբում կարևորվել են՝

- ✓ կենսաբարոյագիտության՝ որպես միջգիտակարգային գիտելիքի նոր ձևի, կյանքի, առողջության և մահվան փիլիսոփայության էության բացահայտումը,
- ✓ ժամանակակից գիտական գիտելիքի և առողջապահության՝ որպես հասարակական ինստիտուտի գործունեության հումանիզացման ցուցանիշների բարելավման գործում կենսաբարոյագիտության դերի վերհանումը,
- ✓ մարդու կյանքի, առողջության և մահվան խնդրակարգի փիլիսոփայական ուսումնասիրության գործում կենսաբարոյագիտության հնարավորությունների հետազոտումը,
- ✓ մարդու արժանապատիվ մահվան արժեհիմքերի և մահվան փիլիսոփայության հետ դրանց կապերի բացահայտումը:

Ատենախոսական հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել հետազոտության առարկայական տիրույթում ներառնված խնդիրների վերաբերյալ Վ. Ռ. Փոթերի, Ա. Հելեգերսի, Հ. Յոնասի, Հ. Յուդինի, Վ. Գ. Բորզենկովի, Պ. Դ. Տիշչենկոյի, Ի. Ն. Սմիռնովի, Ս. Հ. Դավթյանի աշխատությունները, ինչպես նաև Լ. Ս Ներսեսովայի, Զ. Ա. Խաչատրյանի, Ս. Ա Մկրտչյանի, Հրաչ սրկ. Սարկիսյանի, Վարդան սրկ. Ասլանյանի գիտա-բանական ուսումնասիրությունները:

Տեսական վերլուծությունների, ընդհանրացումների, հիմնարար դրույթների առաջադրման ու վերլուծության համար արժեքավոր հենք

է հանդիսացել կենսաբարոյագիտության մարդաբանական տեսությունը, որը մարդու առողջության, կյանքի, ու մահվան կենսականորեն կարևոր հիմնախնդիրների ընդհանուր քննությունը միավորում է կլինիկական կենսաբարոյագիտության հիմ-նախնդիրների (Է. Սգրեչչա և Վ. Տամբոնե[15]) վերլուծության հետ:

Հետազոտության մեթոդաբանական հարացույցի կենտրոնական տարրը միջգիտակարգային մոտեցումն է, ինչը թույլ է տվել՝ օգտագործելով բնագիտական և հումանիտար գիտությունների տվյալները, համարժեքորեն արտացոլել կենսաբարոյագիտության էությունը և կայացման բարդ ու հակասական գործընթացը: Մեթոդաբանական մյուս կարևոր հենքը համակարգային մոտեցումն է, որը թույլ է տվել վեր հանել ինչպես միջգիտկարգային կապերը, այնպես էլ կենսաբարոյագիտության մեջ մտնող տարրերի կապերն ու հարաբերությունները, դրանց բնույթն ու առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները պայմանավորել են համընդհանուր կապի և զարգացման, պատմականության, վերլուծության ու համադրության, ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատության, բացատրության և ընդհանուր գիտական այլ մեթոդների կիրառումը:

Գիտական նորույթը

Առաջադրվել են գիտական նորույթ բովանդակող մի շարք դրույթներ ու եզրակացություններ, մասնավորապես.

- Վերհանվել, որոշակիացվել ու համակարգվել են կենսա-բարոյագիտության փիլիսոփայական-մեթոդաբանական հիմքերը, հիմնավորվել է կենսաբարոյագիտությունը որպես գիտելիքի միջգիտակարգային հետազոտությունների նոր բնագավառ և պրակտիկ փիլիսոփայության նոր ձև դիտարկելու նպատակահարմարությունը:
- Բացահայտվել են կենսաբարոյագիտության՝ որպես միջգիտակարգային գիտելիքի նոր ոլորտի, առարկայական

[15] **Сгречча Э., Тамбоне В.,** Биоэтика. серия Богословие и наука. М., 2002. https://predanie.ru/book/216497-bioetika/ (վերջին դիտումը՝ 18.02.2023):

տիրույթի, հիմնական կատեգորիաների, սկզբունքների առանձնահատկությունները:

- Հիմնավորվել է դրույթն այն մասին, որ կենսաբարոյագիտությունը՝ նպաստելով հասարակական և ազգային գիտակցության մեջ առողջության և հիվանդության, կյանքի և մահվան վերաբերյալ փիլիսոփայական-արժեբանական պատկերացումների ձևավորմանը, էապես խթանում է բժշկագիտության և առողջապահության համակարգի հումանիզացման գործընթացը:
- Կենսաբարոյագիտության մեջ պահպանողական և ազատական հայեցակարգերի առանձնահատկությունների և դիալեկտիկայի վերհանման արդյունքում բացահայտվել է այդ արժեբանական մոտեցումների դերը մարդու կյանքի, առողջության և մահվան հիմնախնդիրների փիլիսոփայական վերլուծության գործում: Ձևակերպվել և զարգացվել է տեսակետը, որ այդ մոտեցումների միջև հնարավոր է կառուցողական փոխգործակցություն՝ էթիկական ռելյատիվիզմի ու ազատականության ծայրահեղություններից, ինչպես նաև պահպանողական մոտեցման դոգմատիզմից զերծ մնալու պարագայում:
- Ցույց է տրվել, որ հետխորհրդային հասարակություններում, ներառյալ Հայաստանում, կենսաբարոյագիտության հիմնական նորմերի ու սկզբունքների իրականացման խնդրահարույց լինելը պայմանավորված է հիմնականում բժշկի և հիվանդի փոխհարաբերություններում պատերնալիստական (պահպանողական-ավտորիտար) դիրքորոշումների գերակշռությամբ, ինչպես նաև առողջապահական համակարգում ստեղծված բարդ իրավիճակով (համաճարակ, պատերազմ և այլն):
- Փիլիսոփայական տեսանկյունից վերլուծվել, արժևորվել են մարդու կյանքի, առողջության և մահվան խնդրակարգի հիմնական դրույթները, ինչպես նաև մարդկային կյանքի արժեքի ռելյատիվացման գործընթացի հաղթահարման դժվարությունները: Ցույց է տրվել, որ վերջիններս պայմանավորված են դեռևս չծնված մարդու (սաղմի) կյանքի, ինչպես նաև մահվան շեմին հայտնված մարդու կյանքի նկատմամբ հասարակության մեջ հումանիստական

վերաբերմունքի, հոսպիսյան շարժման զարգացման ոչ բավարար մակարդակով:

Պաշտպանության ներկայացվող դրույթները

✓ Կենսաբարոյագիտության խնդրակարգի ձևավորումը պայմանավորված է գիտության և պրակտիկ փիլիսոփայության մեջ մարդուն վերաբերող ուսումնասիրությունների աճով: Բնագիտական, սոցիալ-հումանիտար և փիլիսոփայական գիտելիքների միավորման հանգուցակետը և կարևոր հիմնախնդիրներից մեկը՝ հասարակական գիտակցության մեջ կյանքի, առողջության և մահվան նոր արժեբանություն, կամ, որ նույնն է՝ կյանքի, առողջության և մահվան պրակտիկ փիլիսոփայության ձևավորումն է:

✓ Բժշկագիտության, դեղագիտության և կենսաբանության զարգացման հեռանկարների ուրվագծման առումով կարևոր է ոչ միայն դրանց գործնական հնարավորությունների, կենսա-տեխնոլոգիաների կիրառման բարոյագիտական հետևանքների, այլև դրանց հումանիստական ներուժի բացահայտումը:

✓ Կենսաբարոյագիտության առարկան, հիմնական կատեգորիա-ները և սկզբունքները ունեն վառ արտահայտված սոցիալ-արժեբանական բնույթ: Կենսաբարոյագիտության խնդրակարգը կապված է մարդու առողջության, կյանքի որակի և մահվան փիլիսոփայության հետ:

✓ Ժամանակակից գիտության և առողջապահության ոլորտի հումանիզացման գործընթացն ուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը՝

- գիտատեխնիկան, բժշկական տեխնոլոգիաների և հասարակության բարոյական զարգացման մակարդակների միջև խզման հաղթահարում,
- ժամանակակից կենսաբանության, բժշկագիտության և դեղագիտության ոլորտներում որակական տեղաշարժերի բացասական հետևանքների վերացում:

✓ 21-րդ դարասկզբի, առողջապահական նոր մարտահրավերների, այդ թվում՝ նոր ի հայտ եկած հիվանդությունների և

համաճարակային ռիսկերի պայմաններում առանձնահատուկ արժեք և կարևորություն են ձեռք բերել հիվանդի իրավունքների, արժանապատվության, ինչպես նաև իրազեկված համաձայնության և արդարության սկզբունքների պաշտպանության հարցերը:

- ✓ Ժամանակակից պայմաններում հրատապ են դարձել արժանապատիվ մահվան, էվթանազիայի բարոյա-փիլիսոփայական իմաստավորման, ինչպես նաև հոսպիսի և ամոքիչ (պալիատիվ) բժշկության խնդրակարգի միջգիտակարգային, փիլիսոփայական ուսումնասիրությունների հիման վրա երաշխավորությունների մշակումները:

Աշխատանքի գիտատեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության մեջ ստացված արդյունքները թույլ են տալիս հստակեցնել կենսաբարոյագիտության՝ որպես միջգիտակարգային գիտելիքի առանձնահատուկ բնագավառի նկատմամբ իրավագիտական, հոգեբանական, բարոյագիտական, բժշկագիտական, սոցիոլոգիական մոտեցումները և փիլիսոփայական հենքի վրա համադրել դրանք:

Ատենախոսության նյութերն ու արդյունքները կարող են օգտագործվել կենսաբարոյագիտության խնդրակարգի հետագա ուսումնասիրություններում, նպաստել բժշկագիտության, բարոյագիտության, կենսաբարոյագիտության, փիլիսոփայական մարդաբանության ժամանակակից հիմնահարցերի իմաստավորման և լուծումների մշակման գործընթացներին:

Գործնական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ատենախոսության եզրակացությունները՝

- գիտական հասարակայնության ուշադրությունն են հրավիրում նորագույն գիտաբժշկական տեխնոլոգիաների հետ կապված բարոյաիրավական հիմնախնդիրների վրա,

- նպաստում են հասարակական և ազգային գիտակցության մեջ մարդու կյանքի և առողջության նկատմամբ ողջամիտ, հումանիստական վերաբերմունքի զարգացմանը,

- խթանում են կենսաբարոյագիտության խնդրակարգի ուսումնասիրության նոր ուղիների որոնումները՝ հաշվի առնելով ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները,

- պարունակում են սոցիալական, բարոյագիտական, հոգեբանական, իրավագիտական և այլ գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են կենսաբժշկության և դեղագիտության ոլորտներում չարաշահումներն ու խախտումները նվազեցնելու և վերացնելու համար,

- օգտակար կարող են լինել գիտության փիլիսոփայություն, բժշկության փիլիսոփայություն, բարոյագիտություն և կենսաբարոյագիտություն հիմնախնդիրներին նվիրված դասընթացներ մշակելու, ուսումնական և մեթոդական ձեռնարկներ պատրաստելու, ինչպես նաև իրավական-նորմատիվ դաշտի բարեփոխումների մեթոդաբանական աջակցության տեսանկյունից:

Ատենախոսության փորձաքննությունը Ատենախոսության թեման, հիմնախնդիրներն ու արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի սոցիալական փիլիսոփայության բաժնում, 2017; 2019; 2021 և 2022 թթ.: Ատենախոսության առանցքային գաղափարները քննարկվել են ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի սոցիալական փիլիսոփայության բաժնի և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի փիլիսոփայության ամբիոնի համատեղ սեմինարում (2019թ.): Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են Սոնա Դավթյանի (համահեղինակ) «Կյանքի և առողջության պրակտիկ փիլիսոփայություն» գրքում (Երևան, «Նաիրի», հրատ., 2017, 352 էջ), ինչպես նաև՝ հայաստանյան և արտասահմանյան գիտական պարբերականներում տպագրված վեց հոդվածներում, միջազգային գիտաժողովների երկու զեկուցումներում և դրանց թեզիսներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության առաջին՝ ***«Կենսաբարոյագիտությունը որպես առողջության կյանքի, և մահվան պրակտիկ փիլիսոփայություն»*** գլխում տրված է կենսաբարոյագիտության, որպես միջգիտակարգային և արժեբանական հետազոտությունների նոր ոլորտի՝ համակարգված բնութագիրը:

Առաջին՝ ***«Կենսաբարոյագիտության խնդրակարգի ուսումնասիրության միջառարկայական եզրերը»,*** ենթագլխում նշվում է, որ կյանքի, առողջության և մահվան խնդրակարգի ուսումնասիրության բնագավառում առաջացել են միջգիտակարգային կամ «միջառարկայական» գիտաճյուղեր: Կենսաբարոյագիտությունը դրանցից մեկն է: Կենսաբարոյագիտությունը կարևորում և խթանում է բժիշկների, դեղագետների, հոգեբանների, իրավաբանների, աստվածաբանների և փիլիսոփաների միջև գիտակարգային երկխոսությունը և նշված ոլորտների միջև փոխշահավետ գործակցության արժեքավոր տիրույթ է:

Երկրորդ՝ «Կենսաբարոյագիտության հումանիստական առաքելությունը», ենթագլխում, վերլուծելով տեսակետը, թե XX դարը հոգևորազերծեց մարդուն, առաջադրվում է այն թեզը, որ կենսաբարոյագիտության առաքելությունը բժշկությանը ոչ միայն աշխարհիկ, այլև կրոնաբարոյական, մասնավորապես՝ քրիստոնեական հումանիզմի արժեքները վերադարձնելն ու զարգացնելն է:

«Կենսաբարոյագիտություն. պահպանողական և ազատական մոտեցումների գործակցության դիալեկտիկան» վերտառությամբ երրորդ ենթագլխում վերլուծվել են այդ մոտեցումների առանձնահատկություններն ու փոխակերպումները: Զարգացվում է այն տեսակետը, որ կենսաբարոյագիտության մեջ ազատական և պահպանողական մոտեցումների միջև կառուցողական փոխգործակցություն հնարավոր է բարոյագիտական ռեյատիվիզմի և միակողմանի նատուրալիզմի, էթիկական դոգմատիզմի ծայրա-

հեղություններից խուսափելու, պահպանողական և ազատական արժեքների միջև խելամիտ հավասարակշռություն հաստատելու պայմաններում:

Ատենախոսության երկրորդ՝ «Կենսաբարոյագիտության հիմնահարցերի փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները», գլխում կենսաբարոյագիտության հիմնահարցերը քննարկվում են XX դարի կեսերից լայն տարածում ստացած իրավապաշտպան շարժման խորապատկերում:

Առաջին ենթագլխում՝ ***«Կյանքի և առողջության նորմատիվ կարգավորման փիլիսոփայական տեսանկյունները»,*** հետազոտվում են անձի ինքնավարության, իրազեկված համաձայնության, գաղտնիության սկզբունքների դերն ու նշանակությունը հասարակական կյանքում, որոնք ամրագրված են կենսաբարոյագիտության սկզբունքներում և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (2005թ.) [16]:

Երկրորդ՝ ***«Կյանքի և առողջության հումանիստական նոր մոդելի մշակման հիմնախնդիրը»*** **ենթագլխում** քննարկվում են հակաբեղմնավորման և հղիության արհեստական ընդհատման հիմնախնդիրները: Այդ համատեքստում քննարկվում է կենասաբարոյագիտությոան՝ որպես գիտելիքի նոր ձևի, տեսական և գործնական նշանակությունը միջառարկայական ոլորտում: Դրա՝ որպես փիլիսոփայական պրակտիկ գիտելիքի ուրույն ոլորտի նպատակը կյանքն է և կյանքի որակը, իսկ մահը հարկ է դիտարկել որպես կյանքի արժանապատիվ ավարտ, եզրափակում:

Երրորդ ենթագլխում՝ ***«Մահվան փիլիսոփայությունը. Էությունն ու հակասությունները»,*** ցույց է տրվում, որ մարդու արժանապատիվ մահվան իրավունքը ներկայումս քննարկվում է որպես էվթանազիայի և հոսպիսների՝ մահացողներին ամոքիչ՝

---

[16] Universal Declaration on Bioethics and Human Rights, UNESCO's 33rd General Conference, on 19th October 2005. https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000146180 (վերջին դիտումը՝ 18.02.2023):

պալիատիվ օգնություն ցույց տալու հիմնախնդիր: Այս շրջանակներում նոր գիտելիքի ձևավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը ստանում է մեթոդաբանական կարևորություն: Իրավական, բարոյական, բժշկագիտական առումներով արդարացի է մարդասիրական այն տեսակետը, ըստ որի բժշկին իրավունք չի տրված դադարեցնելու պայքարը հանուն կյանքի միայն այն պատճառով, որ «հիվանդն անհուսալի է»[17]: Միաժամանակ, հիվանդի կյանքը փրկելը չպետք է վերածվի հոգևարքը արհեստականորեն երկարաձգելու և ոչ էլ՝ «գթասրտությունից դրդված սպանության»: 1981թ. Համաշխարհային բժշկական ընկերության՝ Հիվանդի իրավունքների մասին Լիսաբոնի հռչակագրում ասված է. «Հիվանդն ունի արժանապատվորեն մեռնելու իրավունք»[18]: Ժամանակակից հասարակության մեջ մարդու արժանապատիվ մահվան իրավունքը քննարկվում է երկու ուղղությամբ. որպես էվթանազիայի հիմնախնդիր և որպես հոսպիսների՝ մահացողներին պալիատիվ օգնություն ցույց տալու հիմնախնդիր: Պալիատիվ բժշկության մեջ մշակված տեսակետի համաձայն՝ մահը դիրտարկվում է որպես մարդու կյանքի վերջին հանգրվան: Ի դեպ, «արժանապատիվ մահվան մարդու իրավունքը» ժամանակին հիմնավորվել է Ֆրենսիս Բեկոնի և Ջոն Լոկի աշխատություններում: Նրանք առաջադրել են «կյանքը մինչ ի մահ ուղեկցելու» սկզբունքը[19]:

«Եզրակացությունում» ամփոփվել են ատենախոսական հետազոտության արդյունքները և ձևակերպվել են մի շարք եզրահանգումներ ու երաշխավորություններ: *Մասնավորապես*՝

Կենսաբարոյագիտության՝ որպես միջգիտակարգային գիտելիքի նոր ոլորտի գլխավոր նպատակն է՝ հասարակական, ազգային և անհատական գիտակցության մեջ ձևավորել կյանքի,

---

[17] ***Юдин Б. Г.***, Жить или не жить? «Человек», 1990, №2, с.44.

[18] Лиссабонская декларация о правах пациента. https://e-stomatology.ru/star/info/2010/lissabon_declaration.htm (վերջին դիտումը՝ 18.02.2023):

[19] ***Հարությունյան Մ. Ա., Դավթյան Ս. Ա.,*** Կյանքի և առողջության պրակտիկ փիլիսոփայություն: Երևան, «Նաիրի», 2017, էջ 318-319:

առողջության և մահվան նոր արժեբանություն: Գերագույն արժեքն այստեղ մարդու կյանքն է՝ իր բոլոր արժեքներով, որոնք անհատին տալիս են լիարժեք ապրելու ուժ և կորով: Աստիճանաբար ընդլայնվում են ժամանակակից բժշկության հնարավորությունները. այն սկսել է ձեռք բերել կյանք «տալու-շնորհելու», կյանքը «կառավարելու», մահը «վերահսկելու» սկզբունքորեն նոր հնարավորություններ: Այդ ամենը պահանջում է բժշկական, դեղաբանական պրակտիկայի փիլիսոփայական իմաստավորման նոր մակարդակ: Անդրադարձը Ի. Կանտի, Ֆր. Բեկոնի, Ջ. Լոկի և ժամանակակից մտածողների փիլիսոփայական ժառանգությանը թույլ է տալիս ավելի խոր ու ճշգրիտ կերպով բնութագրել կենսաբարոյագիտության էությունը: Ի. Կանտի ձևակերպմամբ՝ բանականության առջև դրված փիլիսոփայական գլխավոր հարցադրումները՝ «ի՞նչ կարող եմ իմանալ», «ի՞նչ պետք է անեմ», «ի՞նչ կարող եմ հուսալ»[20] , ի վերջո կոչված են պատասխանելու «ինչպե՞ս ապրել» հարցին: «Ինչպե՞ս ապրել» հարցադրումը ներկայումս ձեռք է բերել փիլիսոփայական և կենսաբարոյագիտական նոր հնչեղություն և իմաստ՝ ինչպե՞ս պաշտպանել կյանքը հարաճուն վտանգներից և սպառնալիքներից: Կենսաբարոյագիտությունը որպես գիտություն սահմանելու հարցում կան որոշակի վերապահումներ և առանձնահատկություններ: Կենսաբարոյագիտությունը, ինչպես նշել է Վ. Ռ. Փոթերը, նոր իմաստություն է: Այն, ինչ հետազոտում են կենսաբարոյագետները, հուզում է ոչ միայն իրենց, այլև հասարակության ամենալայն շրջանակներին: Այսինքն, խիստ գիտակարգային իմաստով կենսաբարոյագիտությունը գիտություն չէ, ավելի շուտ՝ գիտական, փիլիսոփայական ճանաչողության գործընթաց, աշխարհայացքային և գիտական գիտելիքի կազմակերպման նոր ձև:

Կենսաբարոյագիտության, որպես միջգիտակարգային գիտելիքի նոր ոլորտի առանձնահատկությունների վերլուծությունը թույլ է

---

[20] Տե՛ս ***Кант И.*** Критика чистого разума. Сочинения в шести томах, т.3. М., «Мысль», 1964, էջ 661-662: https://iphras.ru/elib/Kant_Chist_raz.html (վերջին դիտումը ՝ 18.02.2023):

տալիս ընդգծել, որ մարդու հարաբերությունը իր կյանքի և կենսաշխարհի հետ միայն հայեցողական, տեսական-տրամաբանական ու անհույզ չէ, այլ, լինելով պրակտիկ հարաբերություն, միշտ ներառում է նաև որոշակի հոգեբանական, հուզական, էթիկական, արժեբանական տեսանկյուններ՝ ստեղծելով հեռանկարներ հետագա հետազոտությունների համար:

Կենսաբարոյագիտության՝ որպես կյանքի, առողջության և մահվան պրակտիկ փիլիսոփայության ուրույն ձևի զարգացումը էական շտկումներ ու առաջընթաց կապահովի բժշկագիտության, դեղագիտության, իրավագիտության և ընդհանրապես՝ գիտության ու փիլիսոփայության տրանսհումանիստական որակների հզորացման գործում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. ***Հարությունյան Մ. Ա.,Դավթյան Ս. Ա.,*** Կյանքի և առողջության պրակտիկ փիլիսոփայություն: «Նաիրի», Երևան, 2017, 350:

2. ***Դավթյան Ս. Ա.,*** Մարդու առողջության և կյանքի փիլիսոփայության հիմնախնդիրները: «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակած Փիլիսոփայության համաշխարհային օրվա կապակցությամբ հրավիրված գիտաժողովի նյութեր, Գիրք VII, «Եվրոպրինտ հրատ.», Երևան, 2017թ, էջ 127-135:

3. ***Դավթյան Ս. Ա.,*** Կենսաբարոյագիտությունը՝ որպես մի-ջառարկայական և արժեբանական ուսումնասիրությունների նոր բնագավառ: «Կաճառ», Գիտական տարեգիրք, «Զանգակ», Երևան, 2017, էջ 294-301:

4. **Դավթյան Ս. Ա.,** Էվթանազիայի հիմնախնդրի կենսաբարոյագիտական և փիլիսոփայական տեսանկյունները: Պատմություն և քաղաքականություն «Գիտական հանդես», Երևան, 2021, էջ 94-100:

5. ***Давтян С. А., Давтян С. А.,*** Опыт интроспективного осмысления экзистенциальных координат жизни армян. The survival

strategy in terms of bioethics, philosophy and medicine. Collection of scientific articles with international participation, Volume 23, “CHISINAU”, Moldova, 2017, CEP, Medicina, pp 98-100.

6. **Davtyan S. A.,** Normative regulation of life and health philosophical aspects, Main issues of pedagogy and psychology, Scientific periodical, Yerevan , 2021, pg 41-46.

7. **Davtyan S. A., Davtyan S. H.,** The new model of value attitude towards life, Hospices and relaxing medicine. “Биоэтика. Федеральный научно-практический журнал”, Волгоград, 2021, с. 22-25.

8. ***Davtyan S. H., Davtyan S. A., Ghazaryan K. T., Johrian A. H.,*** Philosophical analysis of the euthanasia problem: the peculiarities of cultural environment, social opinion and mentality, 12th World Conference Bioethics, Medical Ethics and Healt Law, St. Raphael Hotel Resort & Congress Center Limassol, Cyprus March 21-23, 2017Program and Book of AbstractsISAS International Seminars POB 574, Jerusalem, Israel, pg. 14, www.bioethics-conferences.com (վերջին դիտումը՝ 18.02.2023):

9. ***Davtyan S. H., Davtyan S. A., Harutyunyan M. A.,*** uthanasia and medieval armenian thinkers., UNESCO Chair in Bioethics 13th World Conference, Bioethics, Medical Ethics and Healt Law, Ramada Hotel Jerusalem, Israel November 27-29, 2018 www.bioethics-conferences.com (վերջին դիտումը՝ 18.02.2023):

ДАВТЯН СОНА АРАЕВНА

БИОЭТИКА КАК НОВАЯ ФОРМА МЕЖДИСЦИПЛИНАРНОГО ЗНАНИЯ И АКСИОЛОГИИ

Диссертация на соискание ученой степени кандидата философских наук по специальности 09.00.01 – «Философия».

Защита диссертации состоится 19-ого апреля 2023г., в 16^{00} на заседании специализированного совета 062 ВАК по присуждению ученой степени при Армянском государственном университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

В исследовании анализируются следующие аспекты биоэтики: биоэтика как диалог, биоэтика как культурный и этический феномен, биоэтика как практическая философия.

Глава 1. БИОЭТИКА КАК ПРАКТИЧЕСКАЯ ФИЛОСОФИЯ ЗДОРОВЬЯ, ЖИЗНИ И СМЕРТИ

Биоэтика способствует формированию новых ценностей в обществе и в национальном самосознании. Она значительно способствует гуманизации естественных и социальных наук, новых технологий, медицины и здравоохранения за счет перехода от естественных, медицинских, социальных и гуманитарных знаний к установлению баланса между наукой и моралью.

В диссертации рассматривается вопрос об условности определения биоэтики как науки. Биоэтику можно считать наукой, но это не классическая, а современная наука, в которой исследование как процесс получения новых знаний невозможно отделить от их реализации. Проблемы биоэтики волнуют широкие круги общества. Исследования показали, что развитие современной науки значительно стимулирует движение философской, моральной мысли к поиску новых методов и способов, которые могут быть полезны при решении биоэтических проблем. Не случайно в настоящее время возникло много «сложных», «системных», «интегративных», «междисциплинарных» наук. Одна из таких наук - биоэтика, с точки зрения которой каждое событие, связанное с жизнью и здоровьем, уникально.

Глава 2. ОСОБЕННОСТИ ФИЛОСОФСКОЙ ИНТЕРПРЕТАЦИИ БИОЭТИЧЕСКИХ ВОПРОСОВ

Биоэтика как особая форма практической философии жизни учит, что взаимосвязь человека со своей собственной жизнью, со всей биосферой не только дискреционна, теоретична и эмоциональна, но, будучи вовлечена в практические отношения, она всегда предполагает определенную оценку.

Философский анализ проблемы эвтаназии показал, что философская мысль XX-го и XXI-го вв. рассматривает смерть не как нечто чуждое человеческому существованию, а как экзистенциальный компонент самой жизни. Причем философски трактуются не только пограничные вопросы жизни и смерти, но и экзистенциальные основы человеческой жизни, прежде всего, свободы и ответственности. Идея права человека на достойную смерть сегодня активно обсуждается в двух направлениях: как проблема эвтаназии и проблема хосписов.

В диссертации предпринята попытка дать философскую интерпретацию паллиативной медицине, корни которой уходят в средневековую культуру.

В диссертации на основе исследования становления и развития биоэтики обосновывается положение о том, что императив современного человеческого существования требует качественно нового подхода к сложным, глобальным, разнообразным проблемам современности.

Биоэтика - является одним из таких подходов.

SONA ARA DAVTYAN

BIOETHICS AS A NEW FORM OF INTERDISCIPLINARY KNOWLEDGE AND AXIOLOGY

Thesis for the scientific degree of Candidate of Philosophical Sciences under the speciality 09.00.01 - "Philosophy".

The defense of the thesis dissertation will be held on April 19, at 16^{00}, in a meeting of the session 062 professional commission granting scientific degrees at the Armenian State Pedagogical University Khachatur Abovyan. Address: Armenia, Yerevan, 0010, str. Tigran Metz 17.

SUMMARY

In the frame of the given dissertation philosophical analysis includes the following aspects of investigation: bioethics as a dialogue, bioethics as a cultural and ethical phenomenon, bioethics as a practical philosophy.

Chapter 1. BIOETHICS AS A PRACTICAL PHILOSOPHY OF HEALTH, LIFE AND DEATH

Bioethics promotes the formation of new values in social and national consciousness, it stimulates significantly the humanization of natural and social sciences, new technologies, medicine and health care, makes a transition between the natural, medical, social and humanitarian knowledge, as well as establishes balance between science and morality.

The dissertation has referred to the conditionality of defining bioethics as a science. Bioethics can be considered science, though it is not a classical but contemporary science, where investigation, as a means for obtaining new knowledge, can't be differentiated from its implementation. The issues of bioethics concern a wide range of society. The studies have shown that the development of modern science greatly stimulates the movement of philosophical and moral thought in searching new methods and ways which can be useful for solving bioethical issues. It's not accidental at all that today numerous "complex", "systemic", "integrative", "inter-scientific" sciences have been formed. One of such sciences is bioethics, from the point of which any event relating to life and health is unique.

Chapter 2. PECULIARITIES OF THE PHILOSOPHICAL INTERPRETATION OF BIOETHICAL ISSUES

Bioethics as a special form of practical philosophy of life teaches that human inter-relation with his own life, the whole biosphere is not only contemplative, theoretical and emotionless, but, being a practical relation, it constantly involves a certain assessment.

The philosophical analysis of the problem of euthanasia has shown that the philosophical mind of the 20-21st centuries doesn't view death as an alien to human existence, but as an existential component of life itself. Not only the problems of life-death bordering situations are implemented philosophically, but also the existential bases of human life i.e. freedom and responsibility.

Today the idea of a human's dignified death is discussed in two directions: as an euthanasia issue and the problem of hospices. In the dissertation an attempt is made to give the palliative medicine a philosophical interpretation, the roots of which can be found in the Medieval culture.

On the base of the formation and development of bioethics in dissertation is substantiated the position according to which the imperative of the contemporary human existence demands a qualitatively new approach to current complicated, global and various issues. Bioethics is one of such approaches.

Ծավալը՝ 24 էջ, տպաքանակը 70 օրինակ:
Տպագրված է «Printing House » տպարանում